տանեալ զմեզ, առաքէ թուղթս յամենայն քաղաքս և 'ի գաւառս Տէրութեան մերոյ, որք լի են ստութեամբ եւ զրպարտանօք, որովհետեւ ոչ ինչ կարաց հաստատել զիրս ինչ յայտնի վկայութեամբ 'ի վերայ իմ և իմոցս. ապա զհետ եղեւ զրպարտութեամբ և թշնամանօք հնարել ըզթուղթս եւ առիթ լինել խռովութեան և երկպառակութեան ժողովրդոց։ Եւ ապա խնդրէ դատ առնել ըստ օրինաց։ Գրեցաւ հրովարտակ առ Կուսակալս Կարնոյ, Տիգրանակերտի, Սեբաստիոյ, Կուտինայ եւ առ Բգեշխս Վանայ և սահմանացն Իկոնիոյ. զի Յակոբ Կաթուղիկոսն ուր ուրեք և ընդ ումբ իշխանութեան գտցի, մանրամասն քննեսցի, և զցրուեալ թուղթսն, որք առիթ են զրպարտութեան և բամբասանաց, անդորձադրելի մնասցեն. և եթէ հաստատեսցի վկայիւք՝ թէ վնասակար է նա յիրս Արքունի, առնել ըստ օրինաց։

Հասին 'ի Դուռն և այլ թուղթք բողոքանաց 'ի ժողովրդոց Եւդոկիոյ, Ամասիոյ և Գաղատիոյ վասն Յակոբայ Կաթուղիկոսի. թէ մեք յօժարութեամբ հատուցանեմք զսահմանեալ տուրս եկեղեցեաց և վանօրէից մերոց, որ յերուսաղէմ, և աւելի քան զայն ոչ կարեմք հատուցանել. իսկ այժմ Յակոբ Կաթուղիկոսն Էջմիածնի, առեալ ընդ իւր զկեծեալս աւելի քան զքսան, եկեալ իջեւանի 'ի տունս մեր արամբք և երիվարօք, և յամիչտակէ զամենայն ուտելիս և ըմպելիս մեր, պահանջելով զոչխարս և զգառինս և զիայտ. դարման երիվարաց և զարօտատեղի, և ժողովեալ ոստիկանաւ գյոլով դրամս, աւելի քան զկար մեր, առաքէ 'ի սահմանս Պարսից. բազմացոյց 'ի վերայ մեր զրկանս և զանիրաւութիւնս, և էարկ խռովութիւն 'ի մէջ ժողովրդոց։ Եւ ապա խնդրեն՝ զի ժողովեալ դրամն այն դիտութեամբ իւրեանց առցի 'ի դանձն Արքունի։ Եւ հրաման առնել այնպէս, որպէս և խնդրէին. բայց զգուշացուցանէր զի մի՛ անպատուութիւն ինչ արասցեն Կաթուղիկոսին։

Մատուցին նաեւ դիր ամբաստանութեան աղքատք Հայոց զՅակոբ Կաթուղիկոսէն առ Եպարքոսն 'ի բանակն Արքունի 'ի Տավուտ Փաշա, յորում ասէին. մեք ըստ խնդրանաց մերոց ընտրեցաք և կացուցաք զեղիազար վարդապետ Կաթուղիկոս եւ հաստատեցաւ իշխանութիւն նորա